ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

THE HEAD OF THE GENERAL DEPARTMENT
OF LOGISTIC SUPPORT OF MINISTRY OF
DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЧАЛЬНИК ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ
МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО
ОБЕСПЕЧЕНИЯ МИНСТЕРСТВА
ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: depart@mil.am
Հեռ.՝ (+374 10) 29-43-97

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
E-mail: depart@mil.am
Tel.Тел. (+374 10) 29-43-97

№ ԶՄԱԿ/614
«22» 02 2021թ.

«Պահապան» ՍՊԸ (ՀՎՀՀ 00882372) տնօրեն
Վ. Մելիք-Սարգսյանին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ավան, Քուչակի 16/2շ
էլ. հասցե՝ 0507200069@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 19.03.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/17-2 գնման պայմանագրին կից 31.03.2020թ. կնքված N 3 համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2020թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներում պետք է մատակարարեր 500 լրակազմ «կիտել և կիսաշրջազգեստ կիսաբրդյա, ամենօրյա» ապրանքատեսակը, որից 320 լրակազմ չի մատակարարել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 21-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը վերը նշված ապրանքատեսակի մասով /լուծման մասին ծանուցումը հրապարակվել է gnumner.am կայքում 25.01.2021թ./, սակայն հաշվի առնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 11.02.2021թ. թիվ ՍՑ-ՆԳ-2021/31 որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. փետրվարի 19-ին միակողմանի մասնակի լուծել է նաև N ԲՄԱՊՁԲ-7/17-2 գնման պայմանագիրը ,վերը նշված ապրանքատեսակի մասով՝ հիմք ընդունելով N ԲՄԱՊՁԲ-7/17-2 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները:

Եթե 22.01.2021թ. ՆՏԱ/197 ծանուցմամբ սահմանված ժամկետում և կարգով «Պահապան» ՍՊ ընկերությունը չի կատարել տույժերի և պայմանագրի կատարման ապահովման տուժանքի հետ կապված պարտավորությունները, ապա տեղեկացնում եմ, որ «Պահապան» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 322 596 ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 1 044 000 ՀՀ դրամ՝ որպես տուժանք (պայմանագրի կատարման ապահովում):

Ն. ՅՈԼՉՅԱՆ